

## ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ Ի ՆՊԱՍԿ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ

Հետազոտություններ իրականացնելու համար հետաքրքրության հայտ  
ներկայացնելու հրավեր

**Կազմակերպություն՝** Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

**Վայր՝** Երևան և ՀՀ մարզեր

**Տևողություն՝** 2 ամիս հետազոտության իրականացում, 5 ամիս նախագծին մասնակցություն /  
Հունիս – Հոկտեմբեր, 2021

**Հետաքրքրության ներկայացման վերջնաժամկետ՝** Հունիսի 7, 2021

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հրավիրում է անհատ հետազոտողների՝ մասնակցելու «Մեծահասակների կրթությունը ի նպաստ Կայուն զարգացման նպատակների» արշավի շրջանակներում իրականացվող հետազոտական մրցույթին: Արշավն իրականացվելու է 2021թ. հունիս – հոկտեմբեր ամիսներին, որի շրջանակներում շուրջ 10 հետազոտողներ ֆինանսավորում (1000 – 1200 եվրո) կստանան Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից ԿԶՆ շրջանակներում առաջարկվող թեմաներից<sup>1</sup> որևէ մեկով կամ մի քանիսով հետազոտություն իրականացնելու համար: Հետազոտության արդյունքները կներկայացվեն արշավի ընթացքում կազմակերպվող ֆորումների ժամանակ, ինչպես նաև կկիրառվեն Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից մեծահասակների կրթության ծրագրերում: Արդյունքները ներկայացվելու են իննովացիոն գործիքների օգտագործմամբ, որի նպատակով Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը կհամագործակցի համատասխան կարողություններով մասնագետների հետ: Վերջիններս հետազոտողներից ստացած տվյալները կներկայացնեն ստեղծագործական և նորարար ձևաչափով:

**Հրավերը բաց է բոլորի համար. առավելություն կտրվի երիտասարդ և մարզերում բնակվող հետազոտողներին:** Հետաքրքրության հայտ ներկայացրած հետազոտողները ներգրավվելու են նաև արշավի մյուս միջոցառումներում և նախաձեռնություններում, որոնց մասին մանրամասները ներկայացված են ստորև:

<sup>1</sup> ԿԶՆ հետազոտությունների համար առաջարկվող թեմաները ներառված են հետաքրքրության հայտի ներկայացման google ձևաթղթում:

Բոլոր հետաքրքրվող հետազոտողները կարող են այդ մասին հայտ ներկայացնել **մինչև սույն թվականի հունիսի 7-ը, ժամը՝ 18:00, լրացնելով հետևյալ էլեկտրոնային հայտադիմումը <https://cutt.ly/ebVBmFz> (հայտի ձևաթուղթը կարելի է ներբեռնել [այստեղ](#))**:

## ԱՐՇԱՎԻ ՄԱՍԻՆ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հայտարարում է «Մեծահասակների կրթությունը ի նպաստ Կայուն զարգացման նպատակների» արշավի մեկնարկի մասին:

Արշավի նպատակն է բարձրացնել Հայաստանում կայուն զարգացման նպատակների մասին իրազեկվածության մակարդակը երիտասարդների և մեծահասակների շրջանում, ինչպես նաև վեր հանել մեծահասակների կրթության մոդելներ, որոնք կարող են նպաստել կայուն զարգացման նպատակների իրագործմանը Հայաստանում:

Այդ նպատակների իրագործման համար 2021թ. հունիս – հոկտեմբեր ամիսների ընթացքում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը կիրականացնի մի շարք միջոցառումներ և նախաձեռնություններ.

- Երեք ֆորումներ Երևանում և Սյունիքում
- Հետազոտական նախագծերի իրականացում անհատ հետազոտողների կողմից
- Համայնքային նախագծերի դրամաշնորհ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մարզային ՄԿ կենտրոնների համար:

Երեք ֆորումները փոխկապակցված են և փոխլրացնող: Առաջին ֆորումը տեղի կունենա 2021թ. հունիսին, որը կունենա տեղեկատվական և փորձի փոխանակման նպատակ, և որին կիրավիրվեն մասնակցելու հետաքրքրություն հայտնած հետազոտողները, ոլորտի փորձագետներ, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մարզային ՄԿ կենտրոնները:

Առաջին ֆորումից հետո հետաքրքրության նախնական հայտ ներկայացրած այն հետազոտողները, որոնք կորոշեն իրականացնել հետազոտություն առաջարկվող ԿԶՆ որևէ թեմայով, կմասնակցեն ընտրության երկրորդ փուլին, որի արդյունքում կորոշվեն 8-10 հաղթողներ: Բացի այդ, կհայտարարվի դրամաշնորհային մրցույթ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մարզային ՄԿ կենտրոնների համար: Մրցույթի հաղթող հետազոտողները և ՄԿ կենտրոնները կստանան ֆինանսական աջակցություն՝ իրենց կողմից ընտրված թեմայի շուրջ հետազոտություններ և համայնքային նախագծեր իրականացնելու համար: Ընտրված հետազոտողներին խորհրդատվական աջակցություն կտրամադրեն Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից ընտրված ոլորտային փորձագետները:

Հետազոտական աշխատանքների միջանկյալ առաջընթացը և փորձագետների աջակցությունը կներառվեն երկրորդ ֆորումի ծրագրում:

Երրորդ՝ ամփոփիչ ֆորումը տեղի կունենա Սյունիքի մարզի Կապան քաղաքում՝ «Կապանը որպես երիտասարդական քաղաք» տարվա միջոցառումների շրջանակում: Ֆորումի ընթացքում ավելի լայն լսարանին կներկայացվեն հետազոտական և համայնքային նախաձեռնությունների նախագծերի արդյունքները:

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ<sup>2</sup>

<b>Հունիսի 7, ժամը՝ 18:00</b>	<b>Հետաքրքրության հայտի ներկայացման վերջնաժամկետ</b>
Հունիսի 25-30 Ժամանակահատված	1-ին ֆորում
Հուլիսի 5	Հետազոտության մրցույթի հայտի ներկայացման վերջնաժամկետ
Հուլիս 15 – սեպտեմբերի 15	Հետազոտությունների իրականացում
Օգոստոս	2-րդ ֆորում
Սեպտեմբեր - Հոկտեմբեր	3-րդ ֆորում Կապանում

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել [asryan@dvv-international.am](mailto:asryan@dvv-international.am) և [mazhinyan@gmail.com](mailto:mazhinyan@gmail.com) էլեկտրոնային հասցեներով:

### ԴԻՎԻՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼԻ ՄԱՍԻՆ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն արդեն 50 տարի է, ինչ պարտավորություն է ստանձնել խթանելու մեծահասակների շարունակական կրթությունը գրեթե 40 երկրներում՝ աջակցություն տրամադրելով Մեծահասակների Կրթություն իրականացնող կառույցների ստեղծմանը և զարգացմանը: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ֆինանսավորվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության, Եվրոպական միության, ինչպես նաև այլ դոնորների կողմից:

### ԴԻՎԻՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հիմնվել է 2002թ.-ին՝ դառնալով Հայաստանում մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ներդրման և զարգացման առանցքային դերակատար: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակն իր գործունեությունը ծավալում է 3 մակարդակներում.

- Մակրո մակարդակ՝ ՄԿ ոլորտում քաղաքականության և համակարգային փոփոխություններ:
- Մեզո մակարդակ՝ կազմակերպությունների և մասնագետների կարողությունների զարգացում, որի շրջանակներում իրականացվում են դասընթացներ, ուսուցողական այցեր, հիմնվել և գործում է ՄԿ կառույցների ոչ ֆորմալ ցանցը:
- Միկրո մակարդակ՝ ՄԿ-ի իրականացում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից աջակցություն ստացող ՄԿ 4 կենտրոններում:

<sup>2</sup> Ենթակա է փոփոխության:

Արշավն իր բնույթով վերաբերում է բոլոր երեք մակարդակներին, քանի որ այն ունենալու է ինչպես քաղաքականությանն, այնպես էլ կարողությունների զարգացմանը և ՄԿ ծրագրերի իրականացմանն առնչվող ասպեկտներ: